ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2025/137

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հուլիսի 2025 թ. N 137

«ԳՅՈՒՄՐՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Գյումրու պետական տեխնիկական քոլեջ» ՊՈԱԿ
Գործունեության հասցեն՝ ՀՀ, Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Տիգրան Մեծ 29
Նախորդ հավատարմագրման մասին
որոշումը և ժամկետը՝ չի ունեցել

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով (այսուհետ՝ Հավատարմագրման կարգ), «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2025 թվականի հուլիսի 11-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Գյումրու պետական տեխնիկական քոլեջ» ՊՈԱԿ (այսուհետ՝ ԳՊՏՔ, քոլեջ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 02 փետրվարի 2024 թ.
վերանայված ինքնավերլուծության ներկայացում՝ 08 օգոստոսի 2024 թ.
փորձագիտական այցի իրականացում՝ 9-11 դեկտեմբերի 2024 թ
փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 29 ապրիլի 2025թ.
թերությունների վերացման նախնական
ծրագրի ներկայացում՝ 23 հունիսի 2025 թ.

ԳՊՏՔ ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

- **Արմեն Հարությունյան**- Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Զարգացման գծով պրոռեկտոր, փորձագիտական խմբի ղեկավար:
- **Աննա Հայրապետյան**- Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի դասախոս, ամբիոնի վարիչ, փորձագիտական խմբի անդամ:
- **Էլինա Շամխալովա**- «Եվրասիա» միջազգային համալսարանի հավատարմագրման գործընթացների համակարգող, փորձագիտական խմբի անդամ:
- **Ալբերտ Թադևոսյան**- Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ֆինանսներ» կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձաքննությունն իրականացվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով: Գնահատման արդյունքներն են.

Չափանիշ	Եզրակացություն
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Բավարարում է
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8. Հասարակական պատասխանատվություն	Չի բավարարում
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ԳՊՏՔ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտարկումները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երկու անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

I. Քոլեջը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում:

Քոլեջում իրականացվող կրթական ծրագրերը, ներգրավված դասախոսական կազմը և նյութատեխնիկական ռեսուրսները հիմնականում ապահովում են որակավորումների արժանահավատ շնորհումը: Ծրագրերը մշակվել են գործատուների մասնակցությամբ և համապատասխանեցված են աշխատաշուկայի պահանջներին՝ հատկապես գործնական հմտությունների զարգացման տեսանկյունից: Դասավանդման գործընթացում ընդգրկված են ինչպես փորձառու, այնպես էլ երիտասարդ մասնագետներ, այդ թվում՝ ոլորտից հրավիրված գործատու-դասախոսներ: Խորհուրդ է տրվում Քոլեջին վերանայել իր նեղ ոլորտային մասնագիտացումները և ուսումնասիրել տրանսպորտային ոլորտի հարակից ուղղություններով կրթական ծրագրեր ներդնելու հնարավորությունները: Այդ նպատակով առաջարկվում է իրականացնել համեմատական

վերլուծություն այն միջազգային քոլեջների հետ, որոնք հաջողությամբ հաղթահարել են նման դիվերսիֆիկացման խնդիրը՝ այս կերպ նպաստելով կրթական առաջարկի արդիականացմանը և համապատասխանեցմանը աշխատաշուկայի փոփոխվող կարիքներին:

II. Ռազմավարական կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում են, առկա են բարելավման ուղղություններ՝ ապահովելու արդյունահեկ կառավարում:

Քոլեջի ներկայիս կառավարման համակարգը հիմնականում արձագանքում է առանձին իրավիճակների՝ առանց երկարաժամկետ ռազմավարական ուղղության և տվյալների վրա հիմնված որոշումների կայացման մշակույթի: Անհրաժեշտ է անցում կատարել իրավիճակային կառավարումից դեպի ռազմավարական, նորարար և տվյալահենք կառավարման մոդելի, որը կհիմնվի հստակ ձևակերպված ռազմավարական նպատակների և դրանց համահունչ արդյունահենք չափելի ցուցիչների վրա, կաշխատի հավաստի և ժամանակին հավաքագրված տվյալների հիման վրա, կունենա մշտադիտարկման և վերլուծության հստակ սահմանված մեխանիզմներ, և կերաշխավորի թափանցիկ և հիմնավորված որոշումների կայացում: Միաժամանակ, կառավարման համակարգը պետք է ունենա բիզնես պլան, որը հիմնված կլինի ոլորտի և աշխատաշուկայի խորքային վերլուծության վրա, կհստակեցնի կրթական ծրագրերի արդիականացման ուղղությունները, կսահմանի մասնագիտական նոր ուղղությունների ներդրման առաջնահերթությունները և կնախանշի ռեսուրսների (մարդկային, նյութատեխնիկական, ֆինանսական) արդյունավետ օգտագործման հստակ մեխանիզմներ:

III. Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը դեռևս չեն աջակցում որակավորումների արժանահավատ շնորհմանը:

Քոլեջին խորհուրդ է տրվում մշակել և կիրառության մեջ դնել հստակ ձևակերպված հետազոտական գործունեության ռազմավարություն, որը կսահմանի.

- կոնկրետ թեմատիկ առաջնահերթություններ՝ կապակցված քոլեջի մասնագիտություններին և տարածաշրջանի պահանջարկին,
- պատասխանատուների դերն ու հետազոտական գործընթացում դասախոսների և ուսանողների ներգրավման ձևերը,
- ֆինանսավորման, ներկայացման և արդյունքների գնահատման հստակ կարգը:

Հետազոտական բաղադրիչը պետք է ընդգրկի նախագծային, ուսումնա-հետազոտական և ստեղծագործական աշխատանքներ՝ կրթական գործընթացի հետ ուղղակի կապ ունենալով:

Միաժամանակ, անհրաժեշտ է վերանայել արտաքին կապերի և միջազգայնացման քաղաքականությունը՝ ստեղծելով համակարգված և ռազմավարական մոտեցում: Խորհուրդ է տրվում.

- սահմանել գործընկերների ներգրավման հստակ գործընթաց (նպատակ, ձևաչափ, պատասխանատու, սպասվող արդյունք),
- ներդնել շահակիցների հետ հետադարձ կապի գործնական մեխանիզմներ՝ պարբերական հարցումներ, համատեղ քննարկումներ գործատուների ու շրջանավարտների հետ,
- ձևավորել միջազգային ծրագրերում մասնակցության պլան՝ կոնկրետ նպատակների և միջոցառումների հստակ նկարագրությամբ (միջազգային շարժունություն, համատեղ ծրագրեր, փոխայցելություններ, բենչմարքինգ և այլն):

4. Թերությունների վերացման ծրագրում անհրաժեշտ է նախատեսել վերը նշված բացերի լուծմանն ուղղված առաջնահերթ գործողություններ՝ ապահովելով նաև հնարավոր ռիսկերի կանխարգելման և կառավարման համապատասխան միջոցառումներ:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Գյումրու պետական տեխնիկական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել 4 /չորս/ տարի պայմանով ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 2 տարի հետո իրականացնելու փորձաքննություն:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել Քոլեջի Կառավարման խորհրդի կողմից հաստատված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով փորձագիտական խմբի և սույն որոշման I, II և III կետերում նշված խնդիրների առաջնահերթ լուծմանն ուղղված գործողությունները՝ ապահովելով հնարավոր ռիսկերի կանխարգելման և կառավարման համապատասխան մեխանիզմներ:
3. Կազմակերպել բոլոր կրթական ծրագրերի ներքին աուդիտ մինչև հաջորդ հավատարմագրման ժամկետը:
4. Հավատարմագրման կարգի 12.1 կետի պահանջներին համապատասխան 2 տարին մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝գնահատելով հաստատության գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները: Գնահատման արդյունքները քննարկել քոլեջի կառավարման խորհրդում:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին մեկ տարի հետո պարտադիր մշտադիտարկման ենթարկել ԳՊՏՔ-ի գործունեության արդյունավետությունը՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ **Վ. Գաբրիելյան**

2025 թ., հուլիսի 11